

ԳՐԱԿԱՆ ԼԵԶԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՐԱՖՖՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

XIX դ. 80-ական թվականներին Րաֆֆին գրում է «Խամսայի մելիքութ-
յունները»¹ պատմագիտական ծավալուն ուսումնասիրությունը և «Գաղտ-
նիք Ղարաբաղի»² հոդվածը: Սրանք ամփոփում են նրա գիտական ողջ ժա-
ռանգությունը, որտեղ մեծատաղանդ վիպասանն ու հրապարակախոսն
այս անգամ արդեն ընթերցողների սեղանին է դնում գիտական բնույթի
ստեղծագործություններ:

«Խամսայի մելիքությունները» աշխատությունը նվիրված է Ղարաբա-
ղի մելիքությունների ծագման, հզորացման ու անկման պատմությանը, ո-
րը ժամանակագրական առումով ընդգրկում է մի քանի հարյուրամյակ՝
XVI դ. մինչև XIX դ. առաջին կեսը: Դա պատմագիտական ու առհասարակ-
ական մի կուռ ուսումնասիրություն է Ղարաբաղի մելիքների կյանքի,
նրանց գործունեության վերաբերյալ, որը զուգահեռաբար առնչվում է
հարակից երկրների ու ժողովուրդների պատմության հետ:

Երկրորդ նյութը՝ «Գաղտնիք Ղարաբաղին», նվիրված է Ապրես Բեկ-
նազարյանի «Գաղտնիք Ղարաբաղին» գրքի քննությանը: Րաֆֆին, հա-
վաստի տվյալների և պատմական հիշատակարանների մանրակրկիտ ու-
սումնասիրությամբ, վարպետորեն բացահայտում է այդ գրքում գետնա-
կամ փաստերի մեծագույն մասի կեղծ և մտացածին լինելը, մյուս կողմից
ցույց տալիս, որ այդ դիրքը նաև գրագողության արդյունք է: (Հեղինակը
վերջին եզրակացության է հանգում՝ քաղվածաբար իրար հետ համեմատե-
լով «Գաղտնիքից» և «Խամսայի մելիքություններից» բերված ստվարածա-
վալ հատվածները): Այս երկու աշխատություններով Րաֆֆին ընթերցո-
ղին ներկայանում է որպես հայ ժողովրդի պատմության մի ժամանակա-
հատվածի հմուտ դիտակ, որպես պատմաբան գիտնական:

Պատմական բնույթի գիտական ուսումնասիրություններ, իհարկե, շատ
են եղել թե՛ Րաֆֆու ապրած ժամանակաշրջանում և թե՛ նրանից առաջ:
Սակայն այս աշխատանքները հայ պատմագիտության բնագավառում յու-
րահատուկ են նրանով, որ դրանք արևելահայ գրական լեզվով շարադր-
ված առաջին հայ պատմագիտական երկերն են, որոնցում Րաֆֆին լեզվա-
կան այդ տարբերակի համար ճանապարհ է հարթում դեպի գիտության
ասպարեզ:

1 Ր ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու աասը Հատորով, հ. 10, 1959, էջ 165–396:

2 Նույն տեղում, էջ 396–510:

Պատահական չէ, որ Ղ. Ալիշանը Բաֆֆուն հղած իր նամակներից մեկում գրում է, որ աշխարհաբար լեզվով հայ ժողովրդի պատմությունը գրելը սպասվում է Բաֆֆունց³:

Գիտական խոսքը, ինչպես ամեն մի խոսք, ձևով և բովանդակությամբ միավորված կուռ կառուցվածք է: Այդ կառուցվածքում բաղադրամասերից որևէ մեկի փոփոխությունը, բնականաբար, դժվարություններ կարող է ստեղծել նաև մյուս բաղադրամասի լիարժեք դրսևորմանը:

Ասվածը վերաբերում է նաև Բաֆֆուն գիտական խոսքին, որի լեզուն նորմավորված գրական աշխարհաբարն է: Եվ թվում է, թե լեզվական նոր տարրերակր կարող է արգելանքներ ստեղծել հեղինակի գիտական խոսքի բովանդակության լիարժեք արտահայտման համար: Սակայն երբ ուշագրություն ենք դարձնում Բաֆֆուն գիտական խոսքի բովանդակային կողմին, նկատում ենք, որ գրանում հաղթահարված են նաև տյգ կուրգի խոչընդոտները, և նրա խոսքն անթերի է նույնիսկ այսօրվա չափանիշների հաշվառմամբ: Ասվածի լավագույն ասացույցը «Խամսայի մեխիթունները» աշխատության քննությունն է ըստ այն սլահանջների, որոնք ներկայացվում են գիտական ուսումնասիրություններին:

Այսպես՝ «Խամսայի մեխիթունները», որպես գիտական ստեղծագործություն, կառուցվածքային առումով կարելի է բաժանել երեք մասի՝ ա) խնդրի առաջադրում, բ) հարցի քննարկում, գ) համապատասխան եզրահանգում:

Բաֆֆին իր առաջադիր խնդիրը ձևակերպում է յոթ կետերով, որոնք հեղինակի հետագա շարադրանքում քննարկման և մեկնաբանման նյութ են դառնում: «Իմ հետազոտության մեջ ես պետք է շոշափեմ դլխավորապես հետևյալ կետերը. 1) «Գաղտնիք»-ի հեղինակները՝ հայր և որդի Բեկնաղարյանները - իրական անձնավորություններ են, թե մտացածին: 2) «Գաղտնիք»-ի հյուսվածքը, լեզուն, գաղափարները, նկրտումները արտահայտում են արդյոք իրանց ժամանակի հատկանիշները» և այլն⁴:

Հոգվածի եզրակացություններն ամփոփվում են տասը կետում, որոնք հստակ կերպով առանձնանում են հոգվածի մնացած մասերից: Այսպես՝ «Վերջացնում եմ հոգվածս, ավելացնելով, որ իմ հետազոտությունների մեջ ես հասա հետևյալ եզրակացություններին...»⁵:

Ընդհանրապես պետք է ասել, որ Բաֆֆուն գիտականությունը հետաքրքրում է ոչ միայն ասելիքի բովանդակության մեջ, այլև կառուցվածքում: Այս առումով նա խիստ քննադատության է ենթարկում «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակ համարվող Ապրես Բեկնաղարյանին՝ աշխատության կառուցվածքում գիտականության դեմ մեղանշելու համար: Բաֆֆին գրում է. «Որպես մի պատմական աշխատություն, հարկավոր է նախ որոշել, թե ի՞նչ մասներից է կազմված «Գաղտնիք»-ը: Այդ հտգիվ թե կարելի կլինեն, որովհետև գրքի մեջ բաժանմունքներ

3 Հմտ. «Մշակ», 1913, N 91, էջ 2:

4 Բաֆֆի. նշվ. աշխ., էջ 402-403:

5 Նույն տեղում, էջ 508:

չկան: Հեղինակը ինչ որ գտել է, ինչ որ երևակայել է, ի տեղի և անտեղի կարկատել է միմյանց հետ, առանց դասավորության և առանց կարգի⁶»:

Ուրեմն «պատմական աշխատությունը», որը գիտական խոսք է, պետք է ունենա դիտական կառուցվածք, դասավորության որոշակի «կարգ», որոնցից միանգամայն զուրկ է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը:

Ընդհանրապես դիտական խոսք, գիտական ոճ ստեղծելու նպատակով Ռաֆֆին խստագույնս պահպանում է գիտական խոսքի բոլոր պահանջները. փաստական նյութից օգտվելիս նշվում են բոլոր աղբյուրները, քննադատաբար յուրացվում դրանք և, հավաստիանալով դրանց իսկությունը մեջ, նոր միայն ներկայացվում ընթերցողին: Նա գրում է. «Իբրև գրավոր աղբյուրներ, ես ի նկատի եմ ունեցել հետևյալ ձեռագիր, դեռևս չտպագծված աշխատությունները⁷ Մինչև այստեղ հիշած աղբյուրները դեռևս տպագրությանը լսելիս չտեսած, ձեռագրերի մեջ մնացածներն էին. այժմ դառնանք գեպի այն աղբյուրները, որոնք արդեն տպագծված են⁸: Այս ձևով քննվում են բազմաթիվ գրքեր, հիշատակարաններ, ձեռագիր աղբյուրներ, պատմական արձանագրություններ, նամակներ և այլ վավերագրեր⁹: Պետք է նշել, որ «Սամսայի մելիքությունները» և «Գաղտնիք Ղարաբաղին» գիտական տարբեր ոճերով ստեղծված աշխատանքներ են. առաջինը մենախոսական. գասական ոճով շարագրված փաստաթամանակագրական նյութերի գիտական շարագրանք է, իսկ երկրորդը՝ բանավիճային եղանակով գրված, ծավալուն հոդված: Սա խոսում է այն մասին, որ Ռաֆֆին դեռևս իր ժամանակներում քաջատեղյակ է եղել ինչպես գիտական ոճին, այնպես էլ դրա սարատեսակներին¹⁰ և վարպետորեն կարողացել է օգտվել դրանցից:

Գիտական ոճի բնագավառում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գիտական որոշ փաստերի վերլուծությունները և գրանցից արվող եզրակացությունները: Ուսումնասիրողն այդ եզրակացությունները բխեցնում է բազում նույնանման փաստերի քննությունից՝ մասնավորից զնալով դեպի ընդհանուրը, այդ մասնավորների և ընդհանուրի միջև տեսնելով տրամաբանական կոռուկայ:

Ս. Աբրահամյանն, իր «Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները» հոդվածում, խոսելով ասելիքի գիտականության մեջ մասնավոր իրողությունների քննությանը ընդհանուր օրինականությունների հանգելու փաստի մասին, նշում է. «Ընդհանրականությունը գիտական խոսքի հատկանիշ համարելուց չի կարելի ենթադրել, թե դրանով ժխտվում է գիտական խոսքում մասնավոր իրողությունների քննության փաստը:

⁶ Նույն տեղում, էջ 449:

¹ Նույն տեղում, էջ 379:

⁶ Նույն տեղում, էջ 383:

⁵ Նույն տեղում, էջ 379–387:

¹⁰ Գիտական ոճի տարատեսակների մասին տես Ս. Գ. Աբրահամյան. Հայոց լեզու. Բառ և խոսք. Երևան, 1978, էջ 42–47, Ա. Յ. Րոզենտալ. Практическая стилистика русского языка. М., 1987, с. 33, Ռ. Ն. Շալունց. Մամուլի և հրատարակչության լեզուն. Երևան, 1987, էջ 144–159, Լ. Եզեկյան. Հայերենի գործառական ոճերը. Երևան, 1999, էջ 26–41:

... Գիտությունների մեծ մասում մասնավոր փաստերը, համապատասխան ոճական միջոցներով, ներկայացվում են որպես գիտական օրինաչափությունների հաստատման միջոց»¹¹:

Ինչպես նկատում ենք, Բաֆֆուն Հայանի է եղել գիտական ոճին բնորոշ այս յուրահատկությունը, մի բան, որը վարպետորեն գործադրվում է թե՛ «Խամսայի մելիքություններում», թե՛ «Գաղտնիքում»: Այսպես, նա, մեկ առ մեկ անդրադառնալով Մակար վարդապետի «Գաղտնիքում» կերտած 60–70 հերոսներին, տրամաբանորեն ցույց է տալիս զրանց անիրական լինելը և կատարում այսպիսի ընդհանրացում. «Այս բոլորից հետո շատ պարզ է, որ Մակար վարդապետի 60–70 հերոսները իրենց այլանդակ և հրեշավոր մականուններով, որոնց ներկայացնում է նա «Գաղտնիքի» մեջ իբրև պատմական անձնավորություններ, – ամենը միասին վերառած, երբեք պատմական գոյություն չեն ունեցել... Նրանք հայր սուրբի վառ երեակայություն ծնունդն են և ավելի ոչինչ...»¹²:

Գիտական խոսքի կարևոր առանձնահատկություններից մեկը դրա տրամաբանականությունն է¹³, այսինքն՝ «գիտական շարադրանքի համապատասխանությունը մտքի տրամաբանական զարգացման օրինաչափություններին»¹⁴:

Նյութի կառուցման նման եզանակը ենթադրում է մտքի պատճառահետևանքային հարաբերության ընթացք, որն իրացվում է լեզվական համապատասխան կառույցների գործադրմամբ: Այս առանձնահատկությունը ցայտուն կերպով երևում է նաև Բաֆֆու գիտական խոսքում, որով այս անգամ բացահայտվում են դրական արևելահայերենի հնարավորությունները գիտական խոսքակառուցման շրջանակներում: Ասվածի լավագույն ապացույցը «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատանքն է, որտեղ բանավիճային նյութը հնարավորություններ է ընձեռում Բաֆֆու մտքի ու խոսքի կուռ տրամաբանականության ներկայացման և հաստատման համար:

Քննության ենթարկելով «Գաղտնիքում» գոյություն ունեցող փաստերը՝ հեղինակը տրամաբանության ուժով կարողանում է բացահայտել այդ փաստերի միջև եղած բազում հակասությունները, որով էլ հանդու է այն եզրակացություն, որ այդ դործը կեղծ, մտացածին փաստերի վրա կառուցված աշխատանք է: Մեր ասածը հաստատելու նպատակով

11 Ս. Գ. Աբրահամյան. Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները. – «Լրաբեր հաս. գիտությունների». Երևան, 1982, N3, էջ 17:

12 Բաֆֆու, ԵԺ, էջ 465: Այսուհետ մեջբերումները կատարվելու են հիշյալ հրատարակությունից՝ փակագծերում նշելով միայն էջը:

13 Գիտական ոճի առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Մ. Ն. Կոժինա. Стилистика русского языка. М., 1977, с. 160–171, Ս. Գ. Աբրահամյան. Հայոց լեզու. Բառ և խոսք, էջ 42–45, Ս. Գ. Աբրահամյան. Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները. – «Լրաբեր հաս. գիտությունների», էջ 14–26, Ս. Ա. Մելիքոնյան. Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության. Երևան, 1984, էջ 234–239, Դ. Զ. Քոչեռյան. Նշվ. աշխ., էջ 32–39, В. Г. Кузнецов. Функциональные стили современного французского языка. М., 1991, с. 115–151, Լ. Կ. Եղեկյան. Նշվ. աշխ., էջ 26–41:

14 В. Г. Кузнецов. Նշվ. աշխ., էջ 122:

ցուցադրենք Ռաֆֆու մաքի տրամաբանականության ընթացքի մի օրինակ՝

Ըստ Մակար վարդապետ Բարխուդարյանցի՝ «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակներն են Աբրահամ և Ապրես Բեկնազարյանները (Հայր և որդի), իսկ ինքը միայն այդ գիրքը գրարարից աշխարհաբար լեզվի փոխադրողն է:

Ունենալով Մակար վարդապետի կողմից տրվող նման մեկնաբանությունը, Ռաֆֆին ցանկանում է ապացուցել, որ այդ գրքի և՛ հեղինակը, և՛ թարգմանիչը հենց ինքը՝ Մակար Բարխուդարյանն է, որ ոչ մի Հայր և որդի Բեկնազարյաններ էլ գոյություն չեն ունեցել: Իր այս միտքը Հաստատելու նպատակով նա համեմատում է բազմաթիվ երկրորդական, աննշան թվացող հարակից փաստեր, դրանց միջոցով ճշգրտում Հայր և որդի Բեկնազարյանների ծննդյան ու մահվան տարեթվերը, կենսագրական բազմաթիվ տվյալներ և՛, ըստ իրական պատմական աղբյուրների, գտնում, որ հիշյալ Աբրահամ և Ապրես Բեկնազարյաններն անգամ պատմական անձնավորություններ չեն, ուր մնաց, որ դառնան գիտական աշխատության հեղինակներ: Նա դրում է. «Թե Հայրը և որդին, որ ամեն մի չնչին անցքերի մասին թվականներ են դնում, բայց իրենց ծննդյան թվականը չեն նշանակում... Թեև այդ տարօրինակ հեղինակների ծննդյան թվականները մնում են որպես գաղտնիք «Գաղտնիք»-ի մեջ, բայց անգիտակցաբար բաց են թողնված գրքի մեջ այնպիսի հիշատակություններ, որոնցով շատ հեշտ է գտնել նրանց ծննդյան եթե ոչ ճիշտ թվականները, գոնե ավելի հավանականը» (403):

Նախ՝ հոր՝ Աբրահամ Բեկնազարյանցի վերաբերյալ:

Ռաֆֆին գրում է. «Եթե ընդունեք, որ Աբրահամ Բեկնազարյանցը... այդ Ներսեսի մոտ աշակերտություն է արել, ուսումը ավարտել է և նրա մոտ «երկար ժամանակ» մնացել է, — այդ կարող էր լինել Ներսեսի թե կաթողիկոսությունից և թե եպիսկոպոսությունից առաջ, այսինքն՝ նրա արեղայություն ժամանակ:

Իսկ եթե ընդունենք և այն, որ Աբրահամ Բեկնազարյանցը Ներսեսի մոտ յուր ուսումը ավարտելուց հետո այնքան զարգացած էր, որ պատմություններ էր ընդօրինակում յուր «Գաղտնիք»-ը կազմելու համար, — այդ ժամանակ նա անպատճառ պետք է գոնե 30 տարեկան լիներ:... Այդ 30 տարին այդպես եմ բաժանում. մի որևէ վանք մտնելու համար՝ վանական կանոններով պատանու երեսի մաղերը պետք է դուրս եկած լինեին. եթե Աբրահամ Բեկնազարյանցը 18 կամ 20 տարեկան էր, երբ մտավ Երից-Մանկաց վանքը, մի 10 կամ 12 տարի էլ հարկավոր էր, որ նա այնքան ուսում առներ, զարգանար, որ պատմություն գրեր, մանավանդ այն ժամանակ, որ մարդիկ իրենց ամբողջ կյանքը նվիրում էին ուսման և ոչինչ չէին սովորում... Այժմ Աբրահամ Բեկնազարյանցի ծննդյան թվականը մեր ձեռքում ունենք: Նա ծնվել է 1675 թվին» (405–406):

Նա ապացուցում է, որ Հայր Բեկնազարյանցը, ըստ հեղինակի, պետք է ահռելի տարիք (153) ունեցած լինի, քանի որ 1828 թվականի սեպտեմբերի 20-ին Ա. Բեկնազարյանցը, «հիվանդություն անկողնում», մի նամակ է ստանում Ղարաբաղի Բաղդասար մետրոպոլիտից և պատվիրում իր որ-

դուռն պատասխան գրել: «Եթե նույն տարվա մեջ մեռած լինի նա (Հայր Բեկնաղարյանցը – Ռ. Ա.), ուրեմն ապրել է ամբողջ 153 տարի (1675–1818)» (406):

Բաֆֆին նմանատիպ հաշվարկով գանուժ է, որ որդի Բեկնաղարյանցն էլ ապրել է 106 տարի: «Երկուսը միասին՝ 259 տարի... Լավ է հաշվել Մակար վարդապետը: ... կարելի է ընդունել, որ Հայր և որդի Բեկնաղարյանցները Հայոց մելիքների ընդ որ դործողությունների վկա, ականատես և ժամանակակից են եղել» (407):

«Այժմ հաշվենք: – Գրում է Բաֆֆին», – «Եթե այդ ընդ որը ի մի դուժմարենք, կստանանք ներկա 1886 թվականը, որի մեջ ապրում ենք: Ուրեմն այս տարի Ապրես Բեկնաղարյանցը պետք է հանձնած լիներ Մակար վարդապետին յուր «Գաղտնիք»-ը և ոչ թե 1881 թվին, երբ նա Ղարաբաղում չէր կարող գտնվել» (409):

Այս բոլորից Բաֆֆին բխեցնում է, որ «... «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները – Հայր և որդի Բեկնաղարյանցները – երևակայական անձնավորություններ են, թե այդ դիրքը Մակար վարդապետի խորհրդած աշխատությունն է... և այլն» (409):

Ահա այսպիսին է Բաֆֆու մտքի սրամաբանական ղարդացման ընթացքը:

Նման փաստերի վերլուծության մենք հանդիպում ենք «Գաղտնիք Ղարաբաղի» հոդվածի համարյա բոլոր էջերում, որը, մի կողմից, Բաֆֆու գիտական խոսքի կուռ տրամաբանականությունից ցուցադրումն է, մյուս կողմից՝ արևելահայ գրական նորմավորված լեզվի Բաֆֆիական իրացումը գիտական խոսքում:

Գիտականության կարևոր բնորոշիչներից են պատճառահետևանքային հարաբերություններ միմյանց հետ կապված առանձին նախադասությունների, պարբերությունների, տրամաբանական հաջորդականությունն արտահայտող լեզվական այլ միավորների կապակցական հարաբերությունները¹⁵:

Այդ առնչությունները Ս. Աբրահամյանը դրում է. «... Գիտական խոսքում հաճախ է անհրաժեշտ լինում պատճառաբանել, հիմնավորել այն կամ այն դրույթը, կարծիքը: Այսպիսի կառուցվածքներում հաճախ դործածվում են պատճառի, հետևանքի, ընդհանրացման, մասնավորման և այլ իմաստ արտահայտող բառեր ու բառակապակցությունները»¹⁶: Լեզվական նման միավորները Բաֆֆու գիտական խոսքում հանդես են գալիս որպես ընդհանրացող, մասնավորեցող, այլևայլ կարգի առնչություններով:

Այսպես՝ խոսքի մասնավորող¹⁷ հարաբերությունն դրսևորող կառուցվածքներ՝ «1. Այդ դիրքը գրելուց հետո, հեղինակի փառասիրությունը դրդել է նրան տպագրված տեսնել յուր աշխատությունը: 2. Դիմել է դանաղան անձանց և ոչ մի տեղից օժանդակություն չի գտել: 3. Հետո մտածել է՝ յուր անունը մի կողմ դնելով, յուր աշխատությունը պսակել մի

15 Նախադասությունների կապակցության մասին մանրամասն տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պատանյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդյան. Ժամանակակից Հայոց լեզու. Հ. 3. Երևան, 1976, էջ 797–849: («Նախադասությունների կապակցություն», բաժնի հեղինակ՝ Ս. Աբրահամյան):

16 Ս. Գ. Աբրահամյան. Հայոց լեզու. Բառ և խոսք, էջ 43:

17 Ս. Գ. Աբրահամյան և ուրիշներ. նշվ. աշխ., էջ 814–817:

երևակայական հեղինակի անունով, իբրև մի գրվածք, որ մի քանի հարյուր տարվա հնութիւն ունի, և բովանդակում է յուր մեջ «ամենավտանգավոր դաղտնիքներ»... և այլն: 4. Այդ հրապույրներով, մտածել է նա, մի բարեսիրտ մարդ գտնել...» (400-401):

Մեր կողմից համարակալված նախադասութիւններից երևում է, որը դրանց միջև գոյութիւն ունեցող իմաստային կապը ընդհանուրից զեպի մասնավորը գնացող հարաբերութիւնն է: Ընդհանուր միտքը արտահայտված է նախադասութիւններից առաջինի մեջ. 2-րդ, 3-րդ, 4-րդ բաղադրիչներն ընդհանուր մտքի մասնավոր կողմերը նշող միավորներ են: Խոսքի նման կառուցվածքը դիտական խոսքի յուրահատկութիւններից մեկն է:

Նշենք այլ օրինակներ. «1. Կրկնում եմ, վերջին միտքը Մակար վարդապետի մեջ ծագել է շատ ուշ: 2. Այդ երևում է այն հանգամանքից, որ երբ հայր սուրբը յուր մեջ վճռել է՝ յուր աշխատութիւնը մի ավելի հրապուրիչ հեղինակի անունով ներկայացնել, ... ստիպված է եղել փոխել յուր առաջին առաջարկը...: 3. Առաջաբանի փոխելու մասին... այսպես է արդարացնում իրան հայր սուրբը...» (401): Առաջին բաղադրիչը մասնավորվում է 2-րդ, 3-րդ բաղադրիչներով:

Կամ «1. Այդ ասացվածքների մեջ որքան տեղեր կան, այնքան և սխալներ կան:

2. Ուրմի քաղաքում երբեք հայ կաթոլիկ հասարակութիւն, կամ հայ կաթոլիկ վարդապետներ չեն եղել և այժմ նույնպես չկան: 3. Երբեք հայ կաթոլիկ վարդապետներ... Պարսկաստան չեն մտել, որովհետև...: 4. Ուրմիում եղել է, և այժմ նույնպես կա ասորի-կաթոլիկ հասարակութիւն» (414). դարձյալ 1-ին նախադասութիւնը մասնավորված է մնացածներով: «1. Այդ բոլոր միամիտ խոսակցութիւնները փոքրիշատե հավանական կարող էին լինել, եթե Աղա-Մամադ-շահը կանանոց ունենար: 2. Դժբախտաբար նա ներքինի էր և զուրկ պարսից շահերի կանանոց ունենալու բավականութիւնից: 3. Դեռ աղայութեան հասակում... ներքինացրին նրան» (415) (առաջինը մասնավորեցված է մյուսներով) և այլն:

Բերենք նախադասութիւնների և պարբերութիւնների միջև եղած իմաստային հակառակ՝ ընդհանրացնող⁸ հարաբերութիւն գրսևորող օրինակներ: Այսպես՝ «1. Հայր սուրբը «Գաղտնիք Ղարաբաղի»-ի բնագիրը, որպես ինքն է ասում, կորցրել է 1884 թվի օգոստոսին: 2. Իսկ այդ գիրքը ցենզորից թույլտվութիւն է ստացել 1885 թվի դեկտեմբերի 31-ին: 3. Ուրեմն մինչև ցենզորից թույլտվութիւն ստանալը, արգեն 16 ամիս առաջ բնագիրը կորած էր» (401): Այս օրինակում առաջին երկու նախադասութիւնները, որպես մասնավոր փաստեր, նպաստում են հաստատելու 3-րդ նախադասութեամբ արտահայտված ընդհանրացնող միտքը:

Բերենք այլ օրինակ. «1. Վերևում գրած մի շարք զուգահեռական համատարբութիւններից պարզ հետևում է, որ կամ «Խամսայի մելիքութիւնների» հեղինակը — ես — գողացել է «Գաղտնիք»-ից կամ «Գաղտնիք»-ի հեղինակը՝ Աբրահամ Բեկնազարյանը, գողացել է «Խամսայի մելիքութիւններից»:

2. Ես «Գաղտնիք»-ից գողանալ չէի կարող, որովհետև երբ Աբրահամ Բեկնաղարյանը գրում է իր Հիշյալ առղերը (1795թ.), ոչ թե ես ծնված չէի, այլ իմ հայրն անգամ ծնված չէր: 3. Բացի դրանից, «Խամսայի մելիքուլթյունները» լույս է տեսել 1882 թվին, իսկ «Գաղտնիք»-ը այս ամիսն—1886 թվին: 4. Առաջինը երկրորդից օգուտ քաղել չէր կարող:

5. Բայց պետք է խոստովանել, որ Աբրահամ Բեկնաղարյանը նույնպես չէր կարող օգուտ քաղել «Խամսայի մելիքուլթյուններից», որովհետև նա մեռել է այդ գրքի լույս տեսնելուց 58 տարի առաջ — 1828 թվին:

6. Ուրեմն ո՞վ է գողը...» (425):

Այստեղ արդեն միտքը ձևավորվել է նախադասությունների և պարբերությունների բովանդակությունների մասնավորից դեպի ընդհանուրը գնացող տրամաբանությամբ: Առաջին հինդ նախադասությունները երեք խոսքային պարբերություններով, հանգեցրել են 6-րդ ընդհանրացնող մտքին: Գիտական ոճի յուրահատկությունների ներկայացնող գիտական ղրականության մեջ նշվում է նաև սլատաուհետևանքային հարաբերությամբ կապված նախադասություններով տրամաբանական մտքի ձևավորման մասին¹⁹: Այդ հարաբերությամբ կապված միավորների յուրահատկությունն այն է, «... որ նախադասություններից մեկը կամ մի քանիսը պատճառ են արտահայտում, մյուսը կամ մյուսները հետևանք»²⁰:

Նախադասությունների նմանատիպ հարաբերություններով խոսքի շարադրանքը Բաֆֆու գիտական ոճի յուրահատկություններից մեկը պետք է համարել: Դրանով նա ստեղծում է կուռ, տրամաբանված շարադրանք, որով ցայտուն կերպով ցուցադրվում են արևելահայ պրական լեզվի ներքին հնարավորությունները:

1. «Բայց Մակար Վարդապետը հրաժարվում է իրան «Գաղտնիք»-ի հեղինակ ճանաչել: 2. Մնում են Բեկնաղարյանները, որոնք թե անձամբ խառն են կատարված անցքերի մեջ և թե իրենց հիշատակարանի մեջ գրում են նույն անցքերը: 3. Եվ այսպես անցքերի ճշտության պատասխանատվությունը մնում է վերջինների վրա: 4. Ուրեմն, եթե հայանվեն փաստերի մեջ ղեղձումներ և խոշոր ղեղձումներ,— պետք է ընդունել երկուսից մեկը, կամ Բեկնաղարյանները ստախոսներ են..., կամ նրանք բանաստեղծական անձնավորություններ են» (410):

Բերված հատվածում 1-ին նախադասությունը պատճառ է արտահայտում, որի հիման վրա կառուցվում է 2-րդ նախադասությունը, որպես առաջինի մտքից բխող հետևանք: Իսկ 1-ին և 2-րդ նախադասությունները միասին պատճառի հարաբերության մեջ են գտնվում 3-րդ և 4-րդ հետևանքային երանդ ունեցող նախադասությունների նկատմամբ:

Գիտական խոսքում պատճառահետևանքային հարաբերությամբ խոսքի շարադրման տրամաբանականությունը իրականացվում է նաև խոսքի այլ միջոցներով. դրանցից մեկը նախադասությունների միջև ձևավորվող

19 Ս. Գ. Աբրահամյան. Հայոց լեզու. Բառ և խոսք, էջ 43, Լ. Կ. Ե. գ Ե Կ - Ե. Կ. Նշվ. աշխ., էջ 27:
20 Ս. Գ. Աբրահամյան և ուրիշներ. Նշվ. աշխ., էջ 820:

մտքի անմիջական կապն է լեզվական կրկնվող միավորների (գոյականներ, դերանուններ և այլն) միջոցով²¹:

Այս յուրահատկությունը առանձնապես ընդգծված երևում է Րաֆֆու գիտական ոճում: Այստեղ կրկնվող միավորները տրամաբանական կապ են ապահովում ոչ միայն առանձին հարևան նախադասությունների, այլև սլարբերությունների միջև: Այսպես, օրինակ, «Մեր պատմություն մեջ սակավ է այն տխուր երևույթների թիվը, որ ամեն անգամ, երբ ծագել է մի որևիցե ազգային կարևոր հարց, ամեն անգամ, երբ հայրենիքը տազնապի մեջ է դտնվել, ամեն անգամ, երբ ժողովրդի բարօրություն համար մխիթարական երևույթներ են նշմարվել... Հանկարծ ծագել են կրոնական կամ եկեղեցական վեճեր» (228):

Ինչպես երևում է բերված օրինակից, այստեղ բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կապված են ամեն անգամ կապակցություններ, որն ավելի է շեշտում առանձին նախադասությունների մտքի տրամաբանական կապը: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հիշյալ օրինակում բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են կապվել նաև առանց ամեն անգամ կապակցության, ու թեև առանձին նախադասություններում մտքի ընդհանուր խաթարում էի արձանագրվի, սակայն տրամաբանական կապվածության պակաս, անկասկած, կզգացվի:

Այլ օրինակներ. «Պատմում են, օժուկյան խորհուրդը կատարելու ժամանակ եպիսկոպոսների թվից մեկը պակաս էր. այդ պակասը լրացնելու համար...»: «Գանձակի հայերը այնտեղ գտնված մեղիքների հետ դիմեցին էջմիածին...: Բայց էջմիածինը մերժեց նրանց խնդիրքը...» (249): «Շատ հասկանալի է, եթե մի այսպիսի հնուկյուն գոյություն ունենար, նա չէր թաքցնի ինձանից, — չէր թաքցնի և այն պարոններից, որ այդ ժամանակ Շուշիումն էին»: «Մակար Վարդապետը կարող է ասել. ես այն ժամանակ թաքցրի, որպեսզի ինքս օգուտ քաղեի: — Դարձյալ կարող էր օգուտ քաղել, ո՞վ ուժով կխլեր նրա ձեռքից» (399): «Գաղտնիք»-ի մեջ գտնում ենք անթիվ գաղտնի թղթակցություններ կամ ամբողջապես, կամ նրանց բովանդակությունը: Այս տեսակ գաղտնի թղթակցություններ... խստիվ պահվում են դիվաններում» (411):

Բերենք ամբողջական պարբերությունները միմյանց հետ կապող կրկնվող միավորների օրինակներ:

«Սարգիս եպիսկոպոսը իր եղբայրների հետ եկան Գանձակ 1791 թվին...»:

Միևնույն տարում (1791), երբ Հասան-Ջալալյան Սարգիս եպիսկոպոսը եկավ Գանձակ, իր երկու եղբայրներին... այնտեղից ուղարկեց Գանձասար...:

Բայց նրա եղբայրներին նույնպես չհաջողվեցավ» (248):

Ուրիշ օրինակներ՝ «Մենք տեսանք, երբ Մելիք-Մեջլումը և Մելիք-Աբովը հեռացան Ղարաբաղից, Իբրահիմ-խանը նրանց ընտանիքներից մի քանի հոգի բերեց Շուշի Բերգը...»:

Մենք գիտենք և այն, որ Մելիք-Ռուստամը իմամայի մելիքներից էր...» (261):

21 Ս. Գ. Արրազամյան և ուրիշներ. նշվ. աշխ., էջ 827-829:

«Ես այն ևս կվերաբերեի հայր սուրբի վերին աստիճանի ծածկամտութ-
յանը. եթե նա ղրան-նրան նամակներով դիմած չլինեք, որ տպագրեն յուր
աշխատությունը.....»

Մի այդպիսի նամակ Մակար վարդապետը գրել է և ինձ.....

Այդ նամակները կ'գատառեն «Գաղտնիքի» վարագույրը և Մակա՛ր
վարդապետի վարձունքը...» (400) և այլն:

Այսպիսով, Բաֆֆու «նամասյի մելիքությունները» և «Գաղտնիք Ղա-
րարաղի» դործերը XIX դ. 80-ական թվականներին գրական արևելահայե-
րենով գրված գիտական առաջին ստեղծագործություններն են հայ իրա-
կանություն մեջ:

Այս ստեղծագործություններում մեծ վիպասանի գրչի տակ բացահայտ-
վում են նորմավորված գրական արևելահայերենի այն բոլոր ներքին գոր-
ծառական հնարավորությունները, որոնք դոյություն ունեին հայերենի
վարդապետային շրջանում: Փաստորեն XIX դ. 80-ական թվականներին
գրական արևելահայերենը բավարարում է բոլոր այն սլահանջները, որոնք
հաղորդակցման գործընթացում ներկայացվում են գիտական խոսքին, և
Բաֆֆին դառնում է գրական արևելահայերենով գիտական խոսք ստեղ-
ծող առաջին հեղինակը մեր իրականության մեջ:

ЛИТЕРАТУРНОЕ ЛИНГВОМЫШЛЕНИЕ В НАУЧНЫХ ТРУДАХ РАФФИ

РОЛАНД АВЕТИСЯН

Р е з ю м е

Произведения Раффи "Меликства Хамсы" и "Тайны Карабаха", созданные в 80-х годах XIX века, являются в армянской действительности первыми истори-
ко-научными трудами, написанными литературным восточноармянским язы-
ком. В этих произведениях выявляются все внутренние функциональные воз-
можности норм литературного восточноармянского языка, которые существо-
вали в данный период развития армянского языка в научно-популярном стиле.
Фактически в 80-х годах XIX века литературный восточноармянский язык
удовлетворял все те требования, которые предъявлялись в процессе общения
научному стилю языка, и Раффи становится тем самым создателем научного
стиля, впервые проявленного в форме литературного восточноармянского язы-
ка.